01/10.1/7584-09
2009-11-03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Սամվել Նիկոյանի, Գալուստ Սահակյանի, Արայիկ Հովհաննիսյանի, Արման Սահակյանի, Մարտին Սարգսյանի, Վազգեն Կարախանյանի, Կարինե Աճեմյանի, Ռաֆիկ Գրիգորյանի և Էդուարդ Շարմազանովի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Գույքահարկի գծով հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կիսում է նախագծի հեղինակների մտահոգությունը՝ կապված համայնքային բյուջեներն անհուսալի դարձած (հաշվարկված, սակայն չվճարվող) բյուջետային մուտքերից ազատելու և գույքահարկի հավաքագրման արդյունավետությունը բարձրացնելու հետ։ Սակայն կարծում ենք, որ՝

1) առավել նպատակահարմար է նախ հստակեցնել տվյալների բազան։ Որպես տարբերակ կարելի է քննարկել մինչև 2002 թվականը կուտակված զույքահարկի պարտքերը, տուժերով հանդերձ, որպես անհուսալի ապառք, ընդհանրապես զիջելու հարցը.

2) անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ճգնաժամի պայմաններում առաջանում են սոցիալապես առավել խոցելի խավեր, որոնց մասին հասցեական տեղեկատվություն ունեն համայնքները։ Համայնքների ավագանիները, օգտվելով օրենքով սահմանված իրենց լիազորությունից, կարող են այդ խավերի նկատմամբ կիրառել արտոնություններ։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ օրենքի նախագիծը լրամշակման կարիք ունի և իր պատրաստակամությունն է հայտնում համագործակցել նախագծի հեղինակների հետ՝ օրենքի նախագծի լրամշակման հարցում։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-726-28.09.2009-SS-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Գույքահարկի գծով հարկային արտոնություններ տրամադրելու մասին

Հոդված 1. Սույն օրենքը տարածվում է գույքահարկի գծով 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված եւ չվճարված գույքահարկի պարտավորություն ունեցող գույքահարկ վճարող ֆիզիկական անձանց վրա։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչեւ 2011 թվականի հունվարի 1-ը օրենքով սահմանված գույքահարկով հարկման ենթակա օբյեկտների համար հաշվարկված եւ չվճարված գույքահարկի գումարները (առանց հաշվարկված տույժերի եւ տուգանքների) վճարած ֆիզիկական անձինք ազատվում են 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ գույքահարկի գծով հաշվարկված եւ չվճարված տույժերի եւ տուգանքների վճարումից։

Հոդված 3. Օրենքով սահմանված գույքահարկով հարկման ենթակա օբյեկտների համար 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ գույքահարկի գծով նախորդ երեք տարիներին հաշվարկված եւ վճարված տույժերի ու տուգանքների գումարները հաշվանցվում են հարկատուների՝ գույքահարկի գծով ընթացիկ կամ առաջիկա վճարումների հաշվին։

Հոդված 4. Սույն օրենքով տրամադրվող հարկային արտոնություններով նախատեսված գումարները ենթակա չեն փոխհատուցման «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից։

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Գույքահարկի գծով հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

«Գույքահարկի գծով հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է գույքահարկի գծով հաշվարկված եւ չվճարված պարտավորությունների վերացման անհրաժեշտությամբ, որի արդյունքում ֆիզիկական անձինք հնարավորություն կստանան թեթեւացնելու իրենց հարկային բեռը, իսկ համայնքային բյուջեները՝ կազատվեն անհուսալի դարձած (հաշվարկված, սակայն չվճարվող) բյուջետային մուտքերից։